

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 ապրիլի 2010 թվականի N 230-Ա

**ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ  
ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(վերնագիրը լրաց. 29.06.10 N 483-Ա)**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության տնտեսությունում նորարարական բնույթի մոտեցումների կիրառմանը նպաստելու, ինչպես նաև այդ բնագավառում ընդունվող իրավական ակտերի արդյունավետության բարձրացման, արդյունաբերության ճյուղերի (այդ թվում՝ ռազմաարդյունաբերական համալիրի) և գյուղատնտեսության զարգացման ծրագրերի ուսումնասիրության, տնտեսական նոր ծրագրերի մշակման հիմնարար չափանիշների ձևավորման նպատակով՝

1. Ստեղծել գիտատեխնիկական խորհուրդ և հաստատել դրա անհատական կազմն ու աշխատակարգը՝ համաձայն N N 1 և 2 հավելվածների:

**(1-ին կետը խմբ. 29.06.10 N 483-Ա)**

2. Սահմանել, որ գիտատեխնիկական խորհրդի աշխատանքների ընթացքում ծրագրերի և նախագծերի քննարկման ժամանակ կարող են ներգրավվել նաև համապատասխան մասնագետներ, այդ թվում՝ միջազգային փորձագետներ:

**3. (3-րդ կետն ուժը կորցրել է 29.06.10 N 483-Ա)**

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Տ. Սարգսյան

2010 թ. ապրիլի 7  
Երևան

**Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ջ Մ**

**ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

- Հ. Աբրահամյան - ՀՀ վարչապետ (գիտատեխնիկական խորհրդի նախագահ)
- Լ. Յուլյան - ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար
- Ա. Մինասյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար
- Ս. Հարությունյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ
- Վ. Սահակյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի տեղակալ
- Լ. Թավադյան - ՀՀ ԳԱԱ-ի քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ալկադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ-ի «Ա. Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն (համաձայնությամբ)
- Գ. Հասարթյան - ՀՀ ԳԱԱ-ի «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ-ի օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն (համաձայնությամբ)
- Ն. Այվազյան - ՀՀ ԳԱԱ-ի «Ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն (համաձայնությամբ)
- Ա. Սաղյան - ՀՀ ԳԱԱ-ի «Հայկենսատեխնոլոգիա գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն (համաձայնությամբ)
- Հ. Մուսայելյան - «Մինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)
- Մ. Վարդանյան - «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)
- Վ. Ցականով - «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն (համաձայնությամբ)
- Վ. Դումանյան - «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան (համաձայնությամբ)
- Վ. Մելիքյան - «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի միկրոէլեկտրոնային սխեմաներ և համակարգեր միջֆակուլտետային ամբիոնի վարիչ, «Մինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ի ուսումնական դեպարտամենտի տնօրեն (համաձայնությամբ)
- Հ. Բաբայան - «Նեյտրոն» գործարանի տնօրեն (համաձայնությամբ)
- Ֆ. Նախչարյան - «Գոլոս Արմենիի» թերթի գլխավոր խմբագիր (համաձայնությամբ)
- Մ. Հերզոյան - «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն» ՀԿ-ի նախագահ (համաձայնությամբ)

- Մ. Մարկոսյան - «Երևանի կապի միջոցներ գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)
- Զ. Ասլյան - ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ  
(*հավելվածք փոփ. 29.06.10 N 483-Ս, խմբ. 07.03.13 N 191-Ս, փոփ. 21.05.13 N 364-Ս, խմբ. 03.05.16 N 361-Ս*)

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար

Դ. Սարգսյան

## Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

### ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են Գիտատեխնիկական խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը:

2. Խորհրդի գործունեության նպատակը Հայաստանի Հանրապետության տնտեսությունում նորարական բնույթի մոտեցումների կիրառմանը, այս բնագավառում ընդունվող իրավական ակտերի արդյունավետության բարձրացմանը, արդյունաբերական ճյուղերի (այդ թվում՝ ռազմաարդյունաբերական համալիրի) և գյուղատնտեսության զարգացման ծրագրերի ուսումնասիրության, տնտեսական նոր ծրագրերի մշակման հիմնարար չափանիշների ձևավորմանը նպաստելն է:

3. Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն աշխատակարգով:

4. Խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով:

#### II. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Խորհրդի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

6. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ, ինչպես նաև արտահերթ նիստերի միջոցով՝ սույն աշխատակարգի 10-րդ կետին համապատասխան:

*(6-րդ կետը փոփ. 07.03.13 N 191-Ա)*

7. Խորհրդի նիստերը հրավիրում և վարում է խորհրդի նախագահը:

8. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում խորհրդի նիստը կարող է վարել անդամներից մեկը՝ խորհրդի նախագահի հանձնարարությամբ:

9. Խորհրդի յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ խորհրդի նախագահի զեկուցմամբ:

10. Խորհուրդն իր արտահերթ նիստերը գումարում է խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի առաջարկությամբ:

11. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի կազմի առնվազն երկու երրորդը:

12. Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է:

13. Խորհրդի այն անդամը, ով համաձայն չէ խորհրդի ընդունված որոշմանը, ներկայացնում է իր գրավոր հատուկ կարծիքը, որը կցվում է որոշմանը:

14. Խորհրդի անդամները խորհրդի նիստի անցկացման վայրի, օրվա, ժամի և նիստի օրակարգի մասին տեղեկացվում են նիստի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ:

15. Խորհրդի նիստերին կարող են մասնակցել հրավիրված պետական պաշտոնյաներ, փորձագետներ, զանգվածային լրատվության միջոցների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

15՝. Խորհրդի նախագահի հանձնարարությամբ, խորհրդի նիստի օրակարգի հարցերը նախապատրաստելու նպատակով նախնական քննարկումներ կազմակերպելու համար կարող են հրավիրվել խորհրդակցություններ՝ խորհրդի անդամների առնվազն մեկ երկրորդի մասնակցությամբ:

*(15-րդ կետը լրաց. 07.03.13 N 191-Ա)*

### III. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ

16. Խորհրդի նախագահը՝
  - 1) վարում է խորհրդի նիստերը.
  - 2) ստորագրում է խորհրդի որոշումները և նիստերի արձանագրությունները, խորհրդի գործունեության հետ կապված մյուս փաստաթղթերն ու գրագրությունները.
  - 3) իր բացակայության դեպքում խորհրդի անդամներից մեկին հանձնարարում է վարել խորհրդի նիստը.
  - 4) խորհրդի հաստատմանն է ներկայացնում խորհրդի նիստի օրակարգը,
  - 5) խորհրդի ընդունած որոշումների կատարման նկատմամբ իրականացնում է վերահսկողություն.
  - 6) իրականացնում է սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:
17. Խորհրդի անդամն իրավունք ունի՝
  - 1) խորհրդի նիստից առնվազն 5 օր առաջ գրավոր հարցեր ներկայացնելու խորհրդի նիստի օրակարգում ընդգրկելու համար.
  - 2) ներկայացնելու առաջարկություններ խորհրդի գործունեության, նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.
  - 3) ծանոթանալու խորհրդի նիստերի արձանագրություններին:
18. Խորհրդի անդամը պարտավոր է՝
  - 1) մասնակցել խորհրդի աշխատանքներին.
  - 2) իրականացնել սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:
19. Խորհրդի անդամն իր պաշտոնից ազատվելու պահից կորցնում է անդամակցությունը խորհրդին: Նրա փոխարեն խորհրդին անդամակցում է նույն պաշտոնն ստանձնած անձը՝ բացառությամբ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների:

### IV. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

20. Խորհրդի քարտուղարությունը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումն է:
21. Խորհրդի քարտուղարությունը խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն աջակցելու նպատակով՝
  - 1) նախապատրաստում է նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերն ու դրանք տրամադրում խորհրդի անդամներին.
  - 2) կազմում է խորհրդի նիստերի արձանագրությունները.
  - 3) ապահովում է խորհրդի նիստի որոշումների նախագծերի կազմումը.
  - 4) վարում է խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարությունը.
  - 5) գրանցում է խորհրդի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները.
  - 6) կազմակերպում է խորհրդի որոշումների տրամադրումը խորհրդի անդամներին և համապատասխան կազմակերպություններին:
  - 7) խորհրդի նիստի օրակարգի հարցերը նախապատրաստելու նպատակով հրավիրում են խորհրդակցություններ:

*(7-րդ կետը լրաց. 07.03.13 N 191-Ս)*

*(հավելվածը լրաց. 29.06.10 N 483-Ս, փոփ., լրաց. 07.03.13 N 191-Ս)*

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար

Դ. Սարգսյան